ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ 62-25
05.09.2025թ.

«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի
տնօրեն Ա. Բաղդասարյանին
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Գայի պողոտա 31/34
ՀՎՀՀ՝ 01075543
***Հեռախոս* 374 (098) 81 56 65**
bghda88@gmail.com

Ծանուցում- նախազգուշացում

Հարգելի գործընկեր,ինչպես Ձեզ հայտնի է «Երևան Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «*Գնորդ*») և «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «*Վաճառող*») միջև 21.07.2025 թվականին կնքվել է «Ապրանքի մատակարարման» № «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/30» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»):

Պայմանագրի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի № 2 հավելվածով, այն է՝ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 40 օրացույցային օրվա ընթացքում»՝ մինչև 30.08.2025թ:

Նշվածից հետևում է, որ Ձեր ընկերությունը Պայմանագիրը կնքելիս ստանձնել է Պայմանագրով սահմանված համապատասխան որակի և չափանիշներին համապատասխանող ապրանքների մատակարարման պարտավորություն:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք մինչև 10.09.2025թ. ապահովել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորության կատարումը կամ «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/30» ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները ամբողջությամբ փոխանցել Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ 2473600002170010 հաշվահամարին և այդ մասին գրավոր տեղեկացնել «Երևան Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի «Երևան Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվեհամարին, ապա Ձեր նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Հակառակ դեպքում ստիպված կլինենք հիմք, ընդունելով Պայմանագրի 8.11 կետը, միակողմանի լուծել Պայմանագիրը, իսկ Ձեր տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել

լիազորված մարմին, որը կնախաձեռնի Ձեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրենի ժ/պ Գ. Պողոսյան

Կատարող՝ Գնումների և մատակարարման բաժնի
գլխ. մասնագետ Ն. Փարսադանյան